

Ստարաբաղարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Յայտարարուէիւնների համար, զնարում են
 իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

„ՄԵԼԿ“

ԼՐԱԳԻՐ ԳՆՆԱԳԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881

(Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Գրվելի կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Թիֆլիս, ռեդակցիա «Մշակ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տխուր ապագայ:—Ն եր ք ի ն ա ե ո ս թ ի է ն:
Ն եր ք ի ն լ ու ռ եր:—Ա ր տ ա ք ի ն ա ե ո ս թ ի է ն:
Փ ա լ ա ճ ա կ ա ն ա ե ո ս թ ի է ն: —Յ ա յ ա ա ր ա ռ ու թ ի է ն-
ն ե ու:—Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն: Գ ա լ ո թ թ է կ:

ՏԽՈՒՐ ԱՊԱԳԱՅ

Նսիական ազգերի քաղաքա-
կրթութեան յատկանիշն էր, որ

ԴԱՆԻԹ ԲԷԿ

[illegible]

(1722—1728)

♣.

Միշտ երկու մէլիքները տխուր յուսահատու-
թեան մէջ նախատում էին իրանց անհեռատե-
ստութիւնը, պախարակում էին իրանց դանդաղի-
տութիւնը, այդ միջոցին բանտապետը դուրս էր
բերում գերիներէին իրանց միջին խորշից: Նա-
յոգներին հետաքրքրել բազմութիւնը հաւաքվա-
ն էր այնտեղ, և անհատութիւններ սպասում էին
տեսնել այդ թշուառներին, որոնք մի քանի ւ-
միս մաշվում էին ստորերկրեայ գնդանի մէջ:
Այնտեղից դուրս բերեցին գերիներէին, մի քանի
դաժար և բռն, որպէս քարավանի գրաստ-
ներին կապում են միմեանց հետ: Իւրաքանչիւր
դաժար բաղկացած էր քսան հոգուց, մի եր-
կայի չղթյալ, որի օղակները անց էր կացացած
նրանց պարանոցով, կապում էր բոլորին միա-
մին: Այդ բաւական չէր, բոլորի թեքերը ետեցի
չղթյալած էին կապանքներով: Բանտապետը
սկսեց բաց անել կապանքները: Շատերը չէին
կարողանում ոտքի վրա կանգնել, ստորերկրեայ
գնդանի սպանիչ խոնաւութիւնը անցել էր մինչև
նրանց ոսկրները և թուլացրել էր նրանց ջղերը:
Մտրդ սարսափում էր, նայելով այդ մաշված,
դեղնած, զաղկացած թշուառներ վրա, որոնք,
կարծես, գերեզմանից էին դուրս գալիս: Տեսնե-
լով դրսի օդը, դրսի լոյսը, նրանք փոքր ինչ
գուարթացան, իսկ աղատութեան յոյսը կեանք
տուեց նրանց: Շղթաների մէջ մի քանիսը մե-
ռած էին. դիակը օրերով կապված էր մնացել
կենդանի ընկալել հետ: Իրանց կրկին ձգեցին
գնդանի մէջ, որ հապաքարելի վրա չը մնան, որ
Թորոսի մարդիկը չը տեսնեն:

Դժուար է նկարագրել այն անսահման ուրախությունը, որ տիրեց այդ թշուառներին, երբ թորոս իշխանի մարդիկը եկան նրանց տանելու:

Մի. քանի բույժ գնորդվածի նման գրկախառնվում էին, համընդունվում էին և շատերը արտասուք էին թափում։ Թորոսի, այդ փրկարար հեռչտակի, պաշտելի անունը մոռանալ տուեց նրանց կրած տանջանքները։ Հատերի համար մաքուր հագուստներ էին ուղարկված իրանց ազգականներին, բայց, և սկսեցին անմիջապես փոխել իրանց կեց-տոտ հագուստները։ Պատանի Ստեփաննուր հաջնվեցաւ, որպէս վայել էր մի իշխանական տոմի ներկայացուցչին՝ Նրա զինի վէրքը հոգա-տար տիրնով խնամքով բաւական լաւացած էր, իսկ գունաթափ, հիւանդոտ ղէմքը իր թառամու-թեան մէջ աւելի գեղեցիկ էր։ Նրբ նա բոլորո-վի պատրաստ էր, խանի մանկլակներդ մէկը մտնեցաւ նրան, և գլուխ տալով, ասաց.

— Սխանդ հրամայեց իր հետ ձաշել, թորոս իշխանին էլ աջնտեղ է։

Մանկահասակ իշխանազը, չըճապատված իր հոր վաղորդի ծառաներով, սկսեց հանդիսաւոր կերպով դիմել ղէպի խանի վրանը։ Նա անցաւ կանաւորի չաղոյրների մօտից։ Այդ միջոցին էջր կարելի էր նկատել, որ կանաւորի սարալպիւրէղէից մի գեղեցիկ կանացի ղուլիս կիտով չափ վեր բարձրացաւ, և երկուս խոշոր, ստորակ աջքեր սկսեցին նայել նրա վրա։ Մանկահասակ իշխանազը չուռ եկաւ ղէպի աջն կողմը և երկուսի աջքերը հանդիպեցան միմեանց, Այդ լուռ, խորհրդաւոր հայեացքի մէջ նրանք այնքան չառ բան ասեցին միմեանց և այնքան ազդու կերպով արտայայտեցին իրանց սրտերի զգացմունքները, ինչ որ անկարող էր կատարել պերճախօս լեզուն։ Միայն երեք գերիշինըր տարվեցան թորոսի ձիաւորների մօտ։

Խանը այնպես ուրախութեամբ հանդիպեց Ստեփաննոսին, կարծես, մի ցանկալի հիւր էր ընդունում, կարծես, նրա հետ նոր էր ծանօթանում, և բնաւ չը զիտէր, թէ նա իր բանառումն էր գտնվում Երանուանների տունը քանդողը, նրանց երկիրը բռնութեամբ գրաւողը և Ստեփաննոսի հօրը ու նրանց ամբողջ ազգատունը սրից անցկացնող զազանը, մի առանձին քաղցրութեամբ դարձաւ ղէպի պատանին, հարցնելով.

— Լաւ էք, ողջ էք, առողջ էք, խնչպէս է
 ձեր քէֆը. բարով եկաք, հազար բարով, և հրա-
 շիտեց նրան նստել իր մօտ:

նստումը, արհեստը, զեղարուես-
տը, գիտությունը, գրականու-
թիւնը նեղ, սահմանակ, բարձր
ըջանի սեփականութիւն էին,
իսկ ամբողջը, մեծամասնութիւնը
միշտ մնում էր տգէտ, խաւար,
չէր կարող մասնակցել իր ազ-
գի ընդհանուր առաջադիմական
շարժման մէջ: Այսին տաճարներ,
պիրամիդներ, պալատներ, եկեղե-
ցիներ, — բայց չը կային դպրոց-
ներ: Այսին ձեռագիր անթիւ
գրքեր, գիտութեան ամեն ճիւ-
ղից, — բայց չը կային ժողովուրդա-
կան գրքեր, չը կար ժողովուրդա-
կան, ազգային մամուլ, չը կային
դասադրքեր....

Դարերը անցնում էին, պետույթիւնները անհետանում, ռընչանում էին,—և հին քաղաքակրթութիւնը վայելած երկիրների մէջ մարդը տեսնում է այժմ մի կողմից անանման գեղարուեստական շէնքերի մնացորդ

Հայարտ պատանին, որին աւելի էին ցաւեցնում այդ շողորթութիւնները, քան իր մի քանի բոլակ առաջ կրած չղիմանիւրը, սառնութեամբ պլուխ տուեց խանին, յայտնելով իր շնորհակալութիւնը նրա ուշադրութեան համար, և մօտեցաւ Թորոս իշխանին, գրկվեցաւ նրա հետ։ Իշխանի ուրախութեանը չափ չը կար։ Այդ վեհ, մեծախիտ մարդը չը կարողացաւ զրապել իր արտասուքը, երբ տեսաւ իր կնոջ եղբորը, որը կարծես ողբերիկ աշխարհիցն էր վերադարձել, որին միւսանգամ տեսնելու ամենևին յոյս չուներ։ Պատանու մուայլոտ աչքերում նոյնպէս երևացին արտասուքներ։ Այդ անսաման հոգեկան վրդովմունքի մէջ, նրանք ոչինչ միմեանց ստեղծելի կարողացան։ Խանի վրա աղբեց նրանց սրտաշարժ դրութիւնը և խնդրեց նրանց նստել, սակայն՝

—Հանգստացե՛ք, ամեն բան լաւ էլ լինի... ամեն բան կը մոռացվի... չարժէ այսքան տըխրել անցաւոր աշխարհի համար...

Բաճակալի խօսքերի մէջ կար և կարեկցութիւն և դառն հեգնութիւն։ Նա խրատում էր չը տրիւիւ անցուոր աշխարհի համար, որ միայն հայ մարդու վերաբերութեամբ սև էր. նա խրատում էր մոռանալ սպանված հօրը, սպանված մօրը և սրից անցած ամբողջ ազգատունը. նա խրատում էր մոռանալ հայրենական կողքոյած երկիրը, որ իր ձեռքումն էր գտնվում։

Պատանի Ստեփաննոսը իր աչքերը դարձրեց ղէպի վրանի առջևի հրապարակը, որի վրա մի-մեանց հանդէպ կանգնած էին երկու շարք ձիա-ւորներ՝ հայոց և պարսից։ Իւրաքանչիւր շարքը զուգահեռաբար ձգվում էր, որպէս մի ուղիղ պարիսպ կազմված զինված ձիաւորներից։ Թէ հայերն և թէ պարսիկները, հրացանների պատ-րաստ ձևներին բռնած, լուռ և կասկածաւոր կերպով նայում էին միմեանց երեսին։ Արեգակի ճառագայթները շողշողում էին փայլուն ղէնքերի վրա և լուսաւորում էին անթիւ գլուխներ սև փափայններով, որոնք միախառնվելով, ձևաց-ւում էին մի տեսակ յովու, լայնատարած զան-գուռած։ Նա երեք սյուն տուեց և հարցրեց թո-րոսից։

—Մենք երկար պիտի մնանք այստեղ,
—Ոչ, պատասխանեց իշխանը լուսթեամբ,—
չուտով կը հեռանանք:

ներ, իսկ միւս կողմից նոյն երկիրների ազգերի վայրենի, տգէտ ժառանգներին....

Անդրկովկասը այդ տեսակ երկիրներից միսն է։ Ամեն քայլափոխում դուք պատահում եք շքեղ, աննման արձանների, տաճարների, պալատների, բուրգերի, աւերակների, որոնք վկայում են թէ քաղաքակրթութիւնը մեծ աստիճանի վրա էր կանգնած մեր երկրում, — և մի և նոյն ժամանակ տեսնում եք որ այն ազգերը, որոնք յաջորդներ են այն մեծ քաղաքակրթութեան, դարձել են կամ մնացել են վայրենի ցեղեր։ Նայեցէք այժմեան Հայերին, վրացիներին, ասորիներին, ուտիացիներին, պարսիկներին, ինգլիշներին, աւարցիներին, — նրանք բոլորն էլ չին քաղաքակիրթ ազգերի մնացորդներ են, այն ազգերի, որոնցից դեռ մնացել են Հիանդի պալատներ, տա-

Խանը հասկացաւ, որ նրանք թաղարում
են, հրամայեց շուտով ճաշի սեղանը պատրաս-
տել:

— Գուժք, առաց նա դառնալով իր հիւրերին, իմ աղուհացը անպատկած կը լինէք, եթէ ինձ հետ չը ճաշէք: Ձեզ սեղանակից կը լինեն և երկու յարգելի՛ հիւրեր՝ մէկք Ֆրանգլիւլ ու Բաղր Բէկր:

Լսելով այդ երկու զարչելի անուաները, թէ իշխանը և թէ պատանին երկուսն էլ վերկացան, յայտնելով, թէ չեն կարող սեղանակից լինել այնպիսի անաղնիւ և զգուհի մարդկանց հետ: Խանը նկատելով այդ, կատակի ձև սուեց իր անաղնիւականները, ասելով.

— Տեսնո՞ւմ էք, սուտ չեն ասում, թէ հայերի մէջ միաբանութիւն չի լինի:

— ԴՆԵՐԻ ԿԵՆ ՄԻԱՐԱՆՄԻՈՒՄ, ԽԱՆ, ԱՊԱՏԱԽԱՆՆԵՅ ԻՆՋԱՆԵՐ ԳՈՐԶ ԻՆՋ ԲԱՐԿԱԳԱԾ ՃԱՅ ԴՈՒՐ:— ՍԿԱՅԻՍ ԵՎ ՍԱՐԲԵՐԱՆՆԵՐԸ, ԱՅՍԿԻՍ ԿՆԱԾՈՒՄ ԵՄԱՐԻՆԵՐԸ, ԱՅՍԿԻՍ ԿՆԱԾԱՆՆԵՐԸ ԴՆԵ ՄԻՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԶՈՐԻ ՂԵՐԱՆ, ԻՍԿ ԵՆ ԴՐԱՆՅ ՂԵՐԱՆԻ ԵՐԵՐԸ ԿՆԱՆԵԼ ԶԵԼԵՆԱՆԱՅ:

Որքան և վերադարձան լինելին իշխանի խօսքերը, դարձեալ խանը իրան դադեց և ոչինչ չը պատասխանեց. Նրան ինչ փեսա երկու հայ մէլքէններից ցած, ամամօթ, դաւաճան լինելը, երբ նրանց խաբէութիւններից և դաւաճանութիւններից միշտ օգուտ էր քաղում նա: Բայց ցանկանալով իր հիւրերին, որքան կարելի է, գոհունակ ճանապարհ դնել, նա իր խօսքը յետ առեց: Իշխանը և պատանին հանդուստացան, կրկին նստեցին իրանց սեղերը:

Խառնը սովորություն չունի իր կանանցում
ճաշելու. կանանց հասարակությունը կարող էր
ստորաջնել նրա արժանաւորությունները: Բացի
զրանից, նրա կարծիքով, կանանց հետ պետք
է չէր շատ մտերիմ լինել, պետք չէր շատ ընտա-
նային վարել, այդ կարող էր նրանց աւելի հա-
մարձակութիւն տալ, կարող էր, ինչպէս ասում
են՝ նրանց լերկը բացչա անել, լրբացնել: Կնիկ-
ներին պետք էր միշտ երկկիւղի և սարսափի տակ
պահել: Խոսի նրանց հետ ճաշելը գլխաւոր պատ-
ճառներէրէ մէկն էր մտերմական զարարութիւն-
ների, որը շատ ցանկալի բան չէր. Եւ ո՞ր մէկն
ժող. կարելի էր ճաշել, Նրանք թիւ. և համար

բանները բնակարանները թէն տարբերութիւններ անհաշիւ են, բայց պատերից և առաստաղից ջուր է կաթում, այնքան խոնավ են ուսումնարանների բնակարանները: Ուսուցիչները և աշակերտները տկարանում են:

ԻՊԻՏԻՆՑ մեղ գրում են: Հիգիենայի պատճառով և երկու կուսակցութիւնների վրա, որոնցից մէկը կամենում է առաջարկել կառավարութեանը որ խզի ջրի և գազի ցանցը, իսկ միւսը չէ կամենում որ այդ գիւղը քաղաք դառնայ: Այս պատճառով սաստիկ վէճ է շարունակվում բնակիչների մէջ:

Մեղ գրում են ՇՈՒՇՈՒՑ որ դիտարկութիւն կայ այդ քաղաքում և է ա լ ա կ ա ն դպրոց բաց անել: Բայց քաղաքը բաժանված լինելով երկու որոշ թաղերի մէջ, հայոց իսկ, միւսը թուրքաց, թաղերից խառնաշփոխ կամենում է որ դպրոցը իրանց մօտ լինի: Հայոց թաղում արդէն որ դպրոցի շինութիւնը այդ թաղում արդէն պատրաստ է, ուրեմն ինչ հարկ կայ նորը շինելու թուրքաց թաղում, իսկ թուրքերը ասում են, որ եթէ դպրոցը նրանց թաղում չը շինվի, նրանք ոչինչ միջոցներ չեն նուիրել դպրոցը պահպանելու համար:

ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻՍԻՑ մեղ գրում են, որ այդ քաղաքի հայ երկստորանից դիտարկութիւն ունենալ մի թատրոնական ներկայացումն տալ յօգուտ հոգևոր դպրոցի, բայց մտաբերված են մի-նասցել, որովհետև հայուհիներից ոչ մի կին և ոչ մի աղջիկ չեն կամենում մասնակցել ներկայացմանը: Նախիջևնացիները սիրում են դուրսնու-թիւնները, բայց նրանցից ոչ մէկը չի համաձայն-վի որ իր կինը կամ աղջիկը բնի դուրս գան:

Մեղ հաղորդում են ՋԱՔԱԹԱԼԻՑ որ մի պ. Գարսիսի Մէլիք-Նուրբախեցի չորսով յուն-վարի 3-ին հայը Զաքարիայում է ծանայացաւ: Այ-ժում հայը առաջին տեսակի ծախում է 4 կո-պէկով, երկրորդ տեսակի 3½ կոպ. Գանի մի

նութիւնները, որ առիթ էին տուել այն լանդ-գաւին թուրքաւորել իրան. ասաց, որ նա մի հասարակ գիւղացի աղջիկ էր, մի օր որսորդու-թեան ժամանակ տեսաւ նրան լեռների վրա, ոչխարներ էր արածացնում. տեսաւ և հաւանց նրան, ներքիններից մէկին ուղարկեց նրան բերե-ցին իր կամանովը. աղջկայ ծնողները ուրախա-ցան, որ նա ընկաւ խանի կանանցը, թէն մի ուրիշ տղայի հետ նշանված էր, բայց լանդգաւի-կերի չը մոռացաւ նրան, և խանին սպանե-լով, աշխատում էր կրկին ընկնել իր սիրելիի գիրկը:

Հարեմական խորհրդանները, խեղճ կնոջ կող-բական պատմութիւնը, թոյնը,—այդ բոլորը այն աստիճան անարտաբերութիւն գործե-ցին թէ իշխանի և թէ պատանի Ստեփաննոսի վրա, որ նրանք բոլորովին կողջեր իրանց ա-խորժակը մի բան ուսուցւել, թէն պարսկական խո-հանոցի արդիւնաբերութիւնը հրապուրելու չափ համազամ էր: Պէշտէ պառնիկի կապակները բարձրացնելով, գտան նրանց տակ ամեն տեսակ խորթիկներ, սկսեալ մանկաներից, մինչև ընդե-ղէն, բանջարեղէն կերակուրներ և բազմատեսակ անուշեղէնները: Նրանց մօտ դրած էին անարկի ամանների մէջ զանազան տեսակ քաղցր չէր-բէթներ և մածնաթան (աբուր)՝ որոնց պէտք էր խմել առաջին չերեփներով, որ խիստ նուրբ և գեղեցիկ կերպով շինված էին չիւնջաթի դեղին փայտից: Ողբից ըմպելիքներ չը կային: Դանակ, պատառաքաղ, սեղանի այսպիսի պարագայք չը կային: Բոլոր կերակուրները պէտք էր ուտել մասներով: Երբեմն խանը իւզաթաթախ մասնե-րով վեր էր առնում իր բաժնից մի պատառ-տապակած մի կամ մի բուռը փլաւ, և զննելով իշխանի անակի մէջ, ասում էր.—Կերեք, դա լա-կտոր է: Այդ առանձին ուշադրութիւն և առան-ձին պատիւ էր հիւրին: Կէրվիլը ոչ մի կեր-տուի չը գիպաւ, յայտնելով, թէ սովորութիւն չունի մանկէն կերակուրներ ուտելու: Նրա կար-ծիքով, այդ թէ տեսակ քաղաքութիւն էր, որ մի անասուն, մորթում, ուտում էր ուրիշ անասունի միսը: Նա առեց մի կտոր ցամաք հաց, թաթա-խեց աղի մէջ և կերաւ: Այդ եղաւ նրա հաշ-ձեռոյ հեռացաւ սեղանից, կուճ եկաւ վրանի մի անկիւնում, և հանեց իր կշիռից քաղչ ընկած հովուի մախաղի նմանութիւն ունեցող գրպանից

որ առաջ հացը ծախում էր 6 և 5 կոպէկով: Ուրիշ մթերքներն էլ սկսեցին էփանալ:

«Մշակ» լրագրի թիՖՆԻՍԻ անցեալ տարվայ բաժանորդներից միանք կարծում են որ մենք նրանց կը շարունակենք ուղարկել թերթը և այս տարի: Բայց նրանք սխալվում են. մենք ոչ ո-քին բռնի կերպով չենք կամենում ստիպել մեր լրագրին գրվել: Թող այժման տասն և իննե-րորդ դարում հայը ինքն հասկանայ, պարտա-ւոր է նա արդեօք գրվել հայ լրագրին, թէ ոչ, պարտաւոր է նա արդեօք կարգալ հայերէն, թէ ոչ: Թող թիֆլիսը հասկանայ, արդեօք ամօթ չէ նրան, որ քառասուն հազար հայ բնակիչներից բաղկացած քաղաքը ստանում է ամենօրեայ լր-րագիր երկու թէ երեք հարիւր թուով: Յիշում ենք, որ քերականական մի փոքրիկ քաղաք Հայ-դըրբերի պէս, որ 16 հազար բնակիչ ունի մի-այն, տալիս է տեղական թերթին 5 հազար բա-ժանորդ, ուրեմն բնակիչների քառորդից աւելի: Այդ հաշուով թիֆլիսում, ուր կայ 40 հազար հայ բնակիչ մի ամենօրեայ հայ թերթը պէտք է ունենար 10 հազար բաժանորդ: Իսկ մենք սո-վորաբար ունենք թիֆլիսում միայն երկու հա-րիւր, թէ երեք հարիւր բաժանորդ:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեղ գրում են որ այդտեղ «Մշակի» ամենախառաղ թշնամիները երկու մուժ և խաւար անձնաւորութիւններն են: Մ. Ա-եանց և Ն. եանց, որոնք ամեն ջանք են գործ դնում վրդովեցնել ժողովուրդը «Մշակի» դէմ, որպէս զի մեր լրագիրը շատ բաժանորդներ չու-նենայ Վաղարշապատում: Մենք չը գիտենք ու-րիշ քաղաքներում կան արդեօք այդ տեսակ կա-տաղածներ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԳԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արեւմտեան քաղաքական շրջանների մէջ նորերում լուր տարածվեցաւ մի գաղտնի դաշնակցութեան մասին, որ իբր թէ կապ-

մի ինչ որ բան *) և դրեց փոքրիկ դէյլանի գլխի վրա, վառեց դէյլանը, սկսեց ծխել: Մի բուպէում ամբողջ վրանը լցվեցաւ դառն, կծու և խեղդող ծխով: Բայց այդ արեւելոցի ծուլը որքան ան-տանելի էր ուրիշներին, այնքան բաւականու-թիւն էր պատճառում դէրվիշին: Նա արդէն մի տեսակ կիսաբուռ դրութեան մէջ, աչքերը փա-նում ձեռքից և ծուլը մանր ջրակներով դուրս էր գալիս երբեմն նրա պնչերից, երբեմն սևորակ և ուռած չրթուքի միջից: Սարսափելի էր նայել այդ կուճ եկած, մուսլուտ մարդու վրա, որ ներ-կայացնում էր մի չոր ու ցամաք կմալը, ոսկոր-ների մի կոյտ, որ կուլուլված էր իր սպիտակ շա-պիկի մէջ: Նրա այլանդակ դէմքի վրա երևում էին երբեմն տեսողային ցնցումներ, իսկ երբեմն անցնում էր մի տեսակ չարախնդաց ժպիտ: Մերթ-մնրթ նրա բերանից դուրս էին թռչում խուլ, անորոշ հառաչանքներ անհասկանալի բա-ռերի հետ:

—Երեմի, ողբերկի հետ է խօսում, ասաց խանը, մի առանձին անհաւատութեամբ նայելով դէ-րվիշի վրա:

Նա մի և նոյն դրութեան մէջ բոլորովին քը-նեց, դարձեալ իր ձեռքից բաց չը թողնելով դէյ-լանը: Մանկալիկներից մէկը վերաբաց դէյլանը և ծածկեց նրան թանգապին շալից կարված մի թիթի վերամակով: Ի հարկէ, եթէ դէրվիշը տեա-նէր այդ, շատ պիտի վրաւարդէր, որ նրա ճգ-նութիւններով սպանված մարմինը ծածկում էին այս տեսակ չքեղ վերամակով:

Հաշիւուց յետոյ, երբ վերադարձին սեղանը, դարձեալ լուսավելու ջուր բերեցին: Այնուհետև փոքրիկ, նախշուն ֆինջաններով ամառցելն սուրճ առանց շաքարի: Բոլորից վերջը սովեցաւ դէյլան, բայց ոչ դէրվիշի դառն դէյլանի նման, այլ պատրաստված Պարսկաստանի անուշաոտ ծխախոտից:

—Հիմա ժամանակ է մեղ արձակել խան, ասաց Թորոս իշխանը, չնորհակալութիւն յայտնե-լով նրա հիւրասիրութեան համար:

*) Դէրվիշների ծխելիքը կոչվում է բ ա ն կ, որ պատարաստվում է կանեփի ծաղիկներից ուրիշ քաղաքութիւնների հետ: Նա արեւցնում է ծխողին և նրա ուղեղի մէջ երեսն է հանում զանազան տեսիլքներ:

վաճ է Գերմանիայի և Սպանիայի մէջ: Չը նայելով, որ այս լուրը շատ օտարոտի է անսպասելի էր, այնու ամենայնիւ նրան հաւատացին: Գտնվեցան մարդիկ, որոնք շատ բնական համարեցին քաղաքական այդ գործը: Յայտնի է, որ իշխան Բիսմարկի դեռ 1870 թուականին կամենում էր Հոհենցո-լերնների թագաւորական տան անդամներից մէկին բարձրացնել սպանիական դաշի վրա: Փանի որ իշխան Բիսմարկի այդպիսի ճգ-տումների շարժառիթները ամենքին յայտ-նի էին, ուրեմն իշխան Բիսմարկի վերջին փորձն էլ Սպանիայի հետ դաշնակցութիւն կապելու մասին շատ բնական համարվե-ցաւ, որովհետև Գերմանիային միշտ հար-կաւոր է ունենալ Ֆրանսիայի հարաւային կողմից մի դաշնակց, որը հարկաւոր դէպ-քում կարողանայ արգելել Ֆրանսիային կենտրոնացնել իր զօրքերը գերմանական սահմանների մօտ:

Իսկապէս Գերմանիայի և Սպանիայի դաշնակցութիւնը բաւական աներեւակայելի է: Եւ օրայայի այժման դրութիւնը ի նկա-տի ունենալով, կարող է ի հարկէ այնպիսի մի դէպք պատահի, որ Գերմանիայի հա-մար չափազանց պիտանի կը լինի Սպանիա-յի զինուորական օգնութիւնը, բայց չի կարելի ենթադրել այնպիսի մի անցք, որի ժամանակ Սպանիայի համար անհրաժեշտ լինի Գերմանիայի զինուորական օգնութիւ-նը: Սպանիայի ամբողջութիւնը կատարե-լապէս ապահոված է գոնեա Ֆրանսիայի կողմից, որի դէմ կարող է ուղղված լինել Սպանիայի և Գերմանիայի դաշնակցու-թիւնը: Ֆրանսիացիները երբեք չեն մոտ-ձել և չեն էլ կարող ցանկանալ Սպանիայի մի մասը ձեռք բերել: Պրինսեան լեռների մօտ եղած սպանիական աղքատ նահանգ-ները Ֆրանսիացիների համար ցանկալի չեն կարող լինել: Սպանիան, պահպանելով իր այժմեան սահմանները, պէտք է միշտ խաղաղ և բարեկամական յարաբերութիւն-ներ ունենայ Ֆրանսիայի հետ: Նա անկա-րող է Ֆրանսիայի երկրից մի մասը ձեռք բերել մինչև անգամ այն դէպքերում, եթէ պատահաբար Գերմանիան, նորից յաղթէ

—Ինչպէս կարելի է, դեռ մենք ձեռք ոչինչ ծառայութիւն չենք ցուց տուած, պատասխանեց խանը ներողութիւն խնդրելով.—դուք պիտի մը-նաք մի քանի օրեր, մի քանի շաբաթներ, որ մենք կատարեալապէս կարողանանք ձեր պարտա-ւորութիւնից դուրս գալ:

Իշխանը նոյն կեղծ—քաղաքավարական ոճով յայտնեց, որ ինքը չափազանց չնորհալալ է խանից, որ կատարեց նրա խնդիրքը և իրան միշտ բախտաւոր կը համարէ, որ վայելում է նրա բարեկամութիւնը, և յոյս ունի, որ այդ բարեկամութիւնը անխախտ կը մնայ, եթէ խու-վարար մարդիկ չը խանդարեն նրան: Վերջին խօսքերով նա անխորհուր էր երկու հայ մէլիք-ների վրա:

—Դուք այդ մասին անհոգ կացեք, իշխան, պատասխանեց խանը երգելով.—իմ հօր գերեզ-մանում թող կրակ լցրած լինեմ, եթէ ձեր մի մաղը փոխելու լինեմ հազար այն տեսակ մար-դիկների հետ:

Յետոյ հրամայեց նա իր սանդուխտարին (զան-ձագաճին) իշխանի և պատանի Ստեփաննոսի համար պատրաստեն ընծաներ: Իշխանի համար դուրս բերեցին մի փառաւոր վերաբու (ջուրայ) որ կարված էր Գիշմիրի թանգապին շալից և զարդարած օսկէ թիւերով: Այդ վերաբուին խանի սեպհական վերաբուին էր, որ միանգամ միայն հագել էր նա, երբ ներկայացաւ պարսից շահին. այժմ ընծայելով իշխանին, պարսից մե-ծերի սովորութեամբ մի առանձին պատիւ էր անում իշխանին, պարգեւելով մի այնպիսի խաւաթ, *) որ վեր էր առնված նորին գերազանցութեան խանի սեպհական թիւիւն-քից: Բայց դրանից ընծայեց նրան մի գեղեցիկ ջօզվարդաք**): Թուր, Խորասանի գործ, արծա-թեայ պատեանով և թանգապին ակներով զար-դարած կրակալակով: Պատանի Ստեփաննոսի ընծաները աւելի հրապուրելի էին. նա ստացաւ

*) Խաւաթ նշանակում է պարսից այն ըն-ծաները, որ արվում են հագուստով. այստեղից է հայոց խաւաթ բառը:

**) Ջօզվարդաք արկղիւն է այն տեսակ սրբիկ չեղերքը, որոնք խաւաթի նման նկարներ ունեն և որոնց պատճառած վէրքը անբժշկելի է դառնում: Այս տեսակ սրբերը այժմ Պարսկաս-տանում համարվում են հնութիւն, որովհետև նրանց արհեստը կորած է:

Ֆրանսիային և նրա երկրից աւերակ դարձ-նէ: Ուրեմն եթէ Սպանիան համաձայնի օգնել Գերմանիային, նա այդ բանը պէտք է անի առանց որ և է շահ ունենայու:

Ջարմանալի չէ ուրեմն, որ սպանիական կառավարութիւնը հարկաւոր համարեց հաստատապէս հերքել տարածված այդ լուրը: Պատասխանելով ընդդիմադրական կուսակցութեան անդամներից մէկի հար-ցին, սպանիական արտաքին գործերի մի-նիստը յայտնեց, որ այդպիսի դաշնակցու-թիւն չը կայ և որ Սպանիայի և Ֆրան-սիայի փոխադարձ յարաբերութիւնները ա-մենաբարեկամական են:

Այսու ամենայնիւ հաստատապէս կա-րելի է ասել, որ գերմանական դիպլոմա-տիան Մադրիդի մէջ փորձեր էր անում բարեկամութիւն հաստատել Սպանիայի և Գերմանիայի մէջ: Իշխան Բիսմարկի միշտ գործը կատարելու առաջ նախապատրաս-տութիւններ է արել: Ամենքին յայտնի է, որ Ֆրանսիայի այժմեան բարօրութիւնը և կառավարչական ձեւի տեղականութիւնը չափազանց անհանդիստ է անում Բիսմար-կին Բիսմարկ սխալվեցաւ. ենթադրելով, որ Ֆրանսիայից վերցրած կոնտրիբուցիան և երկու նահանգների խելը, նրան երկար ժամանակով կը թուլացնէ: Նա նկատում է, որ 1870 թուականին յաղթված Ֆրան-սիան վերականգնում է իր յոյժերը և որ Ֆրանսիայի վերանորոգվելուց յե-տոյ նրա կառավարութիւնը կախտաւ լընէ առնել Գերմանիայից, վերադարձնել կորցրած նահանգները և ձեռք բերել իր առաջնակարգ դիրքը եւրոպական պետու-թիւնների շարքում: Գերմանական կառա-վարութիւնը պէտք է պատրաստվի ապա-գայ այդ պատերազմի համար: Նա կուզե-նար ձեռք բերել Սպանիայի դաշնակցու-թիւնը, բայց այս վերջինը ոչ թէ միայն չի կարող թշնամաբար վարվել Ֆրանսիայի հետ, այլ ընդհակառակը նրա շահերը պահանջում են բարեկամական յարաբերու-թիւններ պահպանել իր մօտաւոր դրացու հետ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մի արմատ մատանի և զէնքերի մի ամբողջ խա-խում թուր, հրացան, արածանակներ, գնտակի և վառօդի ամաններ, բոլորը ոսկեղօծ, արծա-թով զարդարած և սև սևաբով մինա արած: Բա-ցի դրանցից, նա ստացաւ մի գեղեցիկ նոյոյ իր ամբողջ ասպազներով:

Պատանի Ստեփաննոսին խիստ ծանր էր ընծա-նեւ ընդունել այն գազանի ձեռքից, որ թա-թախված էր իր հօր, իր մօր և իր ազգատոհմի արեւնով: Այսուամենայնիւ, նա զսպեց իր մէջ վրէժխնդրութեան զգացմունքը, և խոնարհվելով ընդունված քաղաքավարական ձեռքին, յայտնեց իր չնորհակալութիւնը խանի առատաձեռնութեան և բարեսիրտութեան մասին:

Թէ իշխանի և թէ պատանու նոյոյները ար-դէն կանգնեցան էին վրանի հանդէպ. նրանք դուրս եկան, և խանը թափելով չողորթութեան և բարեկամական արտայայտութիւնների մի ամ-բողջ հեղեղ, ճանապարհ դրեց նրանց մինչև նը-ժոյգների մօտ: Նա իր ձեռքով բռնեց իշխանի նոյոյից ասպանդակը և հրաւրեց նստել:

—Այդ, արդէն չափից դուրս է, ասաց իշխա-նը հրաժարվելով:

Խանը խնդրում էր ընդունել այդ ծառայու-թիւնը, որ նրա հիւրասիրութեան և բարեկամա-կան մտեմտութեան աւելի ազգու արտայայտու-թիւնն էր: Բայց իշխանը չը կամենալով մինչև այս աստիճան ստորացնել նրան, ինքը թուա-թամբի վրա, առանց ընդունելու նրա ձեռքից ասպանդակը: Պատանի Ստեփաննոսը և նոր գէնքերով զինաւորված, արդէն գտնվում էր իր նոյոյի վրա: Հայոց ձիաւորների խմբից լսելի եղաւ փողի ձայնը, որ նշան էր հրաժեշտի:

—Մնաց բարեաւ, խան, ասեցին իշխանը և պատանի Ստեփաննոսը, իրանց նոյոյներով վրա-յից գլուխ տալով:

—Բարե ճանապարհ, պատանիսնեց խանը, նոյնպէս գլուխ տալով:

Վերադառնալով իր վրանը, նա իր մտքում ասաց. «Ես քո հպարտութիւնը, չուն հայ, մի խեղեղէն ամանի նման ոտքերիս տակ կը փըշ-բեմ...»

(Կը շարունակվի)

ՄԷ և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ
ԻՒՂ, մազեբը ամրացնելու հա-
մար, 1 ր. ամանը զրձին զիւա-
յաւի զէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-
ՊՈՆ և հոտաւէա ջրեք և այլն:

2—100

ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըն-
ժողովներ, կողպէքներ, մատուցարաններ, ա-
մաններ, դանակներ, գդալներ, թէյաման-
ներ, բաժակներ, թամբեր, գուլպաներ
կանանց և տղամարդկանց, թաշկինակներ,
մակինտոշներ, կալենկօր, թուղթ, մատիա-
ներ, տետրակներ, զրիչներ ամեն ձեռքի
համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-
ժան քան թէ ուրիշ տեղ: Արծրունու
դպրէրէում: 100—32

(Դ ԵԼՈՒԽԱՆԻ ՊԵՐՈՒՄԷՆԻԻ ԴԻՄ, ԱԼԷԽԱՆԻՐԷՆԻՆ յՈՒՆ ԵՊ)

Въ Тифлисъ, въ газетное агентство В. Шавердова.

30—27

ՄԻ ՖԻՐԱՆՍԻԱՅԻ, որ զիսկով ու
և որ 20 տարի շարունակ դասաւու-
րին էր անում ՓԱՐԻԶՈՒՄ, կը կա-
նար դասեր տալ: Բացի ՖԻՐԱՆՍԵ-
ԷՆ լեզուից, նա ուսուցանում է ԳՐԱ-
ՆՈՒԹԻՒՆ և ամէն տեսակ ՆԸ-
ԱՐԶՈՒԹԻՒՆ: Նրա ԱՄՈՒՍԻ-
Ը նոյնպէս Ֆրանսերէնի դասեր է տա-
ւ և կը կամենար օրկայ մէջ մի քանի
սմ պարագիւ չհասակ առած օրրորդներ
առ:

Ռիմել պ. Եղեկեանին, Էնֆիաճևանցի
անը, Ռիօրիանսկայա փողոց Ձ 3, Թիֆ-
լիսում:

1-2

1-6

Մինչև այժմ չեղած ԵԿԵՆՁԻ ԻՎ, ԲԺԻՇԿ
ՇՄԻԴՏԻ, որ կատարելագործված է բժիշկ ՄԵՎՐԻ-
ԿԻ ԴԵՅԶԻՑ: Ըողջացնում է ամեն տեսակ ԽՈՒ-
ԼՈՒԹԻՒՆ, եթէ նա բնական չէ: ԵՐԵՅ ԲՈՒԲԼ ԸՄ-
տանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՇԻՇ, այդ իողից,
մանրամասն ԽՐԵՏՆԵՐՈՎ, գործածութեան մասին: Եյդ
իղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆ-
ՆԵՐԻՑ և Ելէքսանդր ՎԵՆՑԵԼԻՑ, կազանակայա
փողոց № 3:

11—51

Վարձ՝ երթեկեկ հիւանդներիցը ցերեկը—50 կ., գիշեր
անկարձ բժշկական խորհուրդ և դեղ:
Հիւանդանոցումը բնակվում է բժիշկ Նասասարբեանը:

VICHY

Складъ въ ПАРИЖѢ,
23, бульваръ Монтмартръ.

ПАСТИЛЛЫ DIGESTIVES, пригото-
вленные въ Вичи изъ соли, добываемой
изъ особенныхъ источниковъ, весьма
приятны на вкусъ и хорошо дѣйствуютъ
противъ тошноты и труднаго пищеваренія.

SELS DE VICHY POUR BAINS. Одинъ
свертокъ для ваннъ лицамъ, немогущимъ
лечиться въ Вичи.

Во избѣжаніе поддѣлки, требовать
на всѣхъ марку.

Компани.

Pharmacie de Vichy

[illegible]

ԱՄբոռ ջ հա գ ու ս տ կամ պ ա լ ա ո
15 ր., ր է վ օ լ լ ե ր ն ր 4 ր. Լ ա ե ի լ ի
Թ ա ն զ, կ օ ն Ֆ ի կ տ ն ր ր հ ա զ ի դ է մ 60 կ.
Ֆ ու ն ա ը, խ ի ն ա լ ի գ ի ն ի Լ վ օ շ ի ջ ն ը մ
դ է մ 1 ր. 50 կ., խ ե ր ե ս, պ օ ր ա վ է Ն ի
1 ր. 20 կ., կ օ ն ե ա կ շ ի ը 2 ր.: Բ ա զ ի
ա յ դ. Ա ն դ ի խ ա կ ա ն խ ա ն ու թ ի ի մ ջ
ս տ ա զ վ ա ձ է թ է լ մ ձ ք ա ն ա լ ու թ ի ա մ ր:

8-12

3-5

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Զ Ի Ն Ո Ի Մ

Համամասնեցէք թէյի ֆունտը	1 ր.	5 ր.	Կողմայից բերվող թէյի հեռ	Ֆ. 1 ր.	30 ր.
— — — — —	1 ր.	10 ր.	— — — — —	Ֆ. 1 ր.	40 ր.
— — — — —	1 ր.	20 ր.	— — — — —	Ֆ. 1 ր.	60 ր.
— — — — —	1 ր.	40 ր.	— — — — —	Ֆ. 1 ր.	80 ր.
— — — — —	1 ր.	60 ր.	— — — — —	Ֆ. 2 ր.	—
— — — — —	1 ր.	80 ր.	— — — — —	Ֆ. 2 ր.	50 ր.
Սահանաւը	2 ր.	—	— — — — —	Ֆ. 3 ր.	—
					21—100



ԻՒԼԻՈՒՍ ԳՐԵՅԻ Վ ԿԱՅԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ-
ՋՈՑ (դեղ) ՈՍԿՐԱՅԱԻԻ ԵՒ ԲԵՎՄԱՏԻԶՄԻ դեմ:
Ամենալաւ օգնող միջոց է, որ կարելի է հեշտութեամբ և առանց
ցաւի դործ դնել ամէն տեսակ ՈՍԿՐԱՅԱԻԻ ԵՒ ԲԵՎ-
ՄԱՏԻԶՄԻ դեմ, մանաւանդ մատոնելի է ջրերի, ցաւի և մարմնի դանդաղան մա-
սերի կծկման դեմ, միակողմանի գլխացաւի (միգրէն) դեմ, գլխի կծկման դեմ և
միեւեւ անդամ ԿՐԿՆՎՈՂ ԶԵՐՄԻ դեմ, սրտի ափերի և կրծքի բորբոքման դեմ,
նիվմատիզմի հետեւանքները դեմ նոյնպէս և արտասահմանեան ջրերից լաւացողների
համար: Վերայկանի միակ տէրը Վերուս Գրեց, Վեննա, II Prater strasse № 49.
Ծախցում է 4 բոլբի դորձածուլեան խրատներով Ռուսաստանի բոլոր գեղատունների
ընդ: Վրաստանի պահապար Մոսկւայի Բ. Վոլքի և ընկ. խանութի մէջ, Նիկոլսկայա փո-
ղոցի վրաս: Գոտապիսի Ծախսի համար 40 Կ. է ուղարկւում:

12—25 (3)

Հայաստանի Հանրապետության Կառավարության հրամանով № 19-Ն հաստատվել է խոշոր կենտրոնական գրադարանի կազմակերպչական աշխատանքի կատարման համար պահանջարկ ունեցող քաղաքացիական ծառայողների համար 19-Ն համարի հետ կապված հրամանի հետևյալ հոդով համապատասխանությունները՝

VICHY

Управление :

PARIS, 22, boulevard Montmartre.
GRANDE-GRILLE. От лимфатичес-
кого расположения, дурного пищеварения,
засорения печени и селезенки, завала, ка-
менной болзани и проч.

HOPITAL. От трудного пищеварения,
тяжести желудка, потери аппетита, боли
в желудке.

CELESTINS. От боли в пояснице,
мочевого пузыря, каменной болзани, по-
дагры, потери аппетита.

HAUTERIVE. От боли в пояснице,
мочевого пузыря, каменной болзани, по-
дагры, потери аппетита.

ГРЕБОВАТЬ название источника
в коробки.

БѢЛЫЙ И СѢРЫЙ

ԼՕՆԴՈՆԻ ԽԱՆՈՒԹ, ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԱԿ բազմաձեռակալու համար իսկական, լաւ թէճեր և այլ ԱՐԿԻԼԱԿԱՆ ԱՐՐԱՆԲՆԵՐ, օրհնակ, ՀՐԱՅԱՆՆԵՐ, ԲԵՎՈՂԵՐՆԵՐ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ամաններ, ՄԱՀՋԱԿԱՆՆԵՐ, դանակներ, զգալներ, ԹԵՅԱՄԱՆՆԵՐ, շաւիղաւ, ԿԱԿԱՍ, հումաւեւ շերտ, ՍԱՊՈՒՆ, թաշկնաւորներ, ԳՈՒՂԲԱՆՆԵՐ, ԹՈՂՈՒ, մաշիւններ, ԳԻՐԶՆԵՐ, Թամբեր, սաւկիւ: Զըթաց լինող ՊԱՆՏՆԵՐ, մաւ-խառններ: Հաւանալի իսկական ՍԻԳԱՐԱՆԵՐ և անզլիական կոնֆեկտներ:

2—100